

ՄԱՀ ՈՉ ԻՄԱՅԵԱԼ՝ ՄԱՀ Է, ՄԱՀ ԻՄԱՅԵԱԼ՝ ԱՆՄԱՀՈՒԹԻՒՆ Է

Կ'ըսուի թե՛ կրօնքը կը սկսի մահով: Վերցուր մահը՝ կը վերնայ կրօնքը: Որքան ալ աստուածաբանօրէն չբաժնենք այս կարծիքը՝ համոզուած ըլլալով որ կրօնքը սկիզբ կ'առնէ յայտնութեամբ կամ Աստուծոյ ինքնաբացայայտումով, այնուամենայնիւ կը դիտենք մահը իբրեւ լրջութիւնը կեանքի: Հակասականօրէն կեանքի պատմութիւնը, միաժամանակ, պատմութիւնն է մահուան: Մահուամբ կ'որոշուի կեանքը կամ մահուան իրողութեան առջեւ նոր կ'իմաստաւորուի ու ըմբռնելի կը դառնայ կեանքին արժէքը:

«Սկեպտիցիզմ»-ի հիմնադիր եւ դասական շրջանի իմաստասէր՝ Էպիկուրը, մահուան մասին խորհրդածելով կ'ըսէ. «Երբ ես կամ՝ մահը չկայ, երբ մահը կայ՝ ես չկամ, ուստի ինչո՞ւ մտահոգուիմ կամ վախճամ անկէ»: Առէլի ուշ շրջանի իմաստասէր եւ աստուածաբան մը, անդրադառնալով մահուան գաղափարին, կ'ըսէ. «Ահաւորը ո՛չ թէ մահն է, այլ մտածումը մահուան մասին»: Երբ հարց տուեցին հրեայ ականաւոր փիլիսոփաներէն Մարթին Բուրեռին, թէ մահուրնէ կը վախճա՞յ: Ան պատասխանեց. «Ես չեմ վախճար մահէն, բայց կը վախճամ մեռնելէն»:

Հինգերորդ դարու մեր հայերը վարդանանց պատերազմի նախօրեակին, սքանչելի եւ պայծառ վկայութիւն մը կու տան մահուան իմացութեան եւ կեանքի յաւերժութեան մասին, երբ հայ ժողովուրդը կանգնած էր մահուան օրհասականին եւ լինել-չլինելու առջեւ. «Մահ ոչ իմացեալ՝ մահ է, մահ իմացեալ՝ անմահութիւն է: Որ զմահ ոչ գիտէ, երկնչի ի մահուանէ. իսկ որ գիտէ զմահ, ոչ երկնչի ի նմանէ»:

Այստեղ «մահ» երեւոյթը հաւասարաբէք է «անմահութեան»: Խօսքը իմացուած ու ճանչցուած, հասկնալի եւ յստակ գիտութիւն դարձած, իր էութեամբ լուսաբանուած մահուան իմացութեան մասին է, որը համարժէք է անմահութեան եւ կեանքի

յաւերժութեան հետ՝ բոլոր պարագաներուն անկործանելի ըլլալու փաստով: Մեռնելու իրողութիւնն ալ, այս ըմբռնումով եւ իր արտաքին նշաններով՝ ցաւով ու՝ տառապանքով, յարաբերական է: Ի՞նչ է ցաւը, կ'ըսէ Ստենդալ, եթէ ոչ՝ գերագոյն հանոյք մը: Այստեղ, ցաւը ան կը բացատրէ իբրեւ զգացական «էսթէթիք» վիճակ մը: Նայած թէ մարդ անձնական ինչպիսի՜ վերաբերմունք կամ դիրքորոշում ունի ցաւի, տառապանքի եւ մահուան հանդէպ:

Վարդանանց կեցուածքը՝ քրիստոնէական հաւատքին տուած հաւաքական վկայութեան մէկ բարձրագոյն արտայայտութիւնն է, թէ ամէն տեսակ նիւթական եւ պայմանականէ գերիվեր՝ աներկբայ է գոյութիւնը կեանքի յաւիտենականութեան: Մահը իմացուած է, արդարեւ եւ գնահատուած, իսկ կեանքը արժէւորուած: Իբրեւ այդպիսին՝ մահը, իր սարսափազդու խորհուրդէն խորհրդագրկուած եւ առարկայացած է այս համոզումի լոյսին տակ: Սակայն, ո՞րկէ մահուան մասին այն ամբողջ եւ ստոյգ իմացութիւնը, որը, իչնպէս ըսինք համարժէք է անմահութեան: Համոզումը մարդկային հոգիի անխորտակելիութեան եւ կեանքի անընդմիջելի շարունակականութեան մասին, որը արդարեւ կը հանդիսանայ ներքին ուժականութիւնը Վարդանանց հերոսամարտին. ան Քրիստոնէութեան էութիւնը կազմող յարութեան փաստն է, Աստուծոյ կատարած փրկարար միջամտութիւնը մարդկային կեանքի եւ պատմութեան մէջ, Քրիստոսի տարած յաղթանակը մեղքի եւ մահուան դէմ, յաւիտենական կեանքի եւ փրկութեան խորհուրդի մէկանգամ ընդմիջտ շնորհուած ըլլալու իրողութիւնը բոլոր ի Քրիստոս հաւատացողներուն: Առանց այս կարեւոր տուեալին, Քրիստոնէութիւնը իր մարդկային կամ բարոյագիտական ուսուցումներով առանձնայատուկ առաւելութիւն մը պիտի չունենար միւս

կրօնքներուն հանդէպ: Կրօնքներու պատմութեան մէջ նորութիւն մը չէ, թէ մարդոց կերպարանքով չաստուածներ կը ծնին, մարտերու կը մասնակցին եւ անոնց ելքը կ'որոշեն, կ'իյնան եւ կը յառնեն:

Քրիստոսի Աւետարանի յեղաշրջող առաւելութիւնը այն է, որ Աստուած մարդուն համար մարդացաւ, անոր մեղքերուն համար մեռաւ եւ իր հրաշափառ յարութեամբ՝ Աստուծոյ փրկարար ներկայութեան առջեւ վերստին աստուածաման արժէք մը դառնալու, մնայուն ներկայութիւն մը ըլլալու շնորհը տուաւ անոր: Վարդանանք տոգորուած այս բիւրեղ տեսլականով, այս անցկուն համոզումով եւ մղած իրենց հոգեւոր պատերազմը՝ «վասն Յիսուսի եւ վասն Հայրենեաց»: Մեր Հաւատքի այս ահաւոր ուժականութեան կը բխի Վարդանանց անդրդուելի վճիռը:

«Այս հաւատէն մեզ ոչ որ չի կրնար խախտել, ոչ հրեշտակները եւ ոչ մարդիկ, ոչ սուրը եւ ոչ հուրը, ոչ ջուրը եւ ոչ ալ որեւէ այլ դառն հարուած... Քու կողմէդ տանջանք, իսկ մեր կողմէն յանձառութիւն: Քու սուրդ եւ մեր պարանոցները»:

«Եթէ անմահ ալ ըլլայինք եւ հարկ ըլլար մեզի մեռնիլ Քրիստոսի սիրոյն համար, արժան էր. որովհետեւ (Քրիստոս) ալ անմահ էր, բայց այնչափ սիրեց մեզ, որ մինչեւ անգամ մահը յանձն առաւ, որպէսզի մենք ալ անոր մահով փրկուինք յաւիտեական մահէն... կը մեռնինք իբրեւ մահկանացուներ՝ ապրելու եւ անմահանալու համար»:

«Իսկ դուն այս բոլորէն ետք՝ մեզ մի՛ յոգնեցներ. որովհետեւ մեր

հաւատքի ուխտը ոչ թէ մարդու հետ է..., այլ Աստուծոյ հետ անլուծելի կերպով, որ անհնար է քանդել ու հեռանալ, ոչ այժմ եւ ոչ յետոյ, ոչ յաւիտեանս, եւ ոչ ալ յաւիտեանս յաւիտենից»:

Քրիստոնեական կրօնքին եութիւնը՝ ՅԱՐՈՒԹԻՒՆՆ է: Յարութեան լոյսին տակ միայն կ'իմաստաւորուի քրիստոնեային կեանքը, եւ կը նանչցուի մահը որպէս վերջնական նախապայման մը նոր հնարաւորութեանց՝ կեանքի յաւիտեականութեան եւ յաւերժութեան: Ճշմարիտ քրիստոնեան չի՝ վախճար մահէն, քանզի մահուան սարսափազդու մթութիւնը փարատուած է ԱՒԵՏԱՐԱՆԱԿԱՆ լոյսով: Կրօնքը մարդը ներքնապէս ազատագրող փրկարար ուժականութիւն մըն է, պայմանաւ որ ան լա՛ւ հասկցուի եւ ճիշդ արտայայտուի կեանքին մէջ: Իւրաքանչիւր խեղաթիւրում այս սկզբունքին դէմ, կը կաշկանդէ մարդը ու զայն կը դարձնէ թշուառ կալանաւորը իր իսկ պաշտած կրօնքին:

Քրիստոնեական կրօնքին փրկարար եութեանը հաւատարիմ մնալու, ընդհուպ մինչեւ նահատակութիւն եւ մահ՝ այս է եկեղեցւոյ միաբանութեան եւ Վարդանանց ուխտը: Հաւատքի այս աննախընթաց վկայութեամբ իմացուած է մահը, եւ Վարդանանց հերոսամարտին ընդմէջէն հայութեան համար դարձած՝ գրաւական եւ երաշխիք աստուածապարգեւ կեանքի մը յաւիտեականութեան:

Յարգանք, պատիւ եւ օրհնութիւն Վարդանանց քաջ հերոսներուն:

ԷՄՄԱՆՈՒԷԼ ԱՐԴ. ԱԹԱԶԱՆԵԱՆ